

ՏԱՍՆ ԵՒ ՉՈՐՐՈՐԳ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 բուրլ, կէս տարվանը 6 բուրլ:

Առանձին համարները 7 կոպէկով:

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ:

Մեր հասցեն. Тифлисъ. Редакция «Мшакъ».
կամ. Tiflis. Rédaction «Mschak».

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ

(Բացի կիրակի և առի օրերէն):

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լիզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 2 կոպէկ:

ՌՈՎԱՆՆԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մի ակնարկ. Նամակ վաղարշապատից. Նամակ Նովոօրոսկայից. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Բոլշաքա- կան ճգնաժամը. Նամակ Պարսկաստանից. Արտա- քին լուրեր.— ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.— ՅԱՅՏԱՐԱՐՈՒ- ԹԻՒՆՆԵՐ.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԻ ԱԿՆԱՐԿ

«Ճշմարիտ խօսողը գտակը ծակ է» ասում է ժողովրդական առածը: Ճշմարտութիւնը ուղղակի խօսելու մարդու երեսին, դա մի և նոյն է որ սուր ցցելու սրտին, չը նայելով որ նոյն մարդը համոզ- ված է որ այդ զուտ ճշմարտութիւն է:

Խօսքը հայ ազգի ինքնատրուական վերաբեր- լու մասին է, որ յանդգնեցաւ «Մշակի» խմբա- գիրը իր 95-որդ համարի առաջնորդող յօ- դուածում, այն էլ այդպէս պարզ և համարձակ խայթելով...

Այն, սուր ցցեց նա մեր սրտին, բայց անդ, դա ճշմարտութեան սուրն էր, որ լրագրող առաջն մեղմանցիւ, առանց այդու պէս կերպե- լու, ուղղակի խօսեց մեր սրտին: Յիրաւ, դրա պիտակ պակասութիւնը այդ է: Հայ ազգը այդ- պիտի վերաբերի ճշմարտութիւններ առաջին ան- զամ չէ լուծում այդ յանդգն խմբագրից: 1872 թ-ից դա սկսեց յարձակվել հայ ազգի ամեն դա- սակարգի վրա, յարձակվեց ընդհանուր ազգի վը- րա, անխնայ կերպով քրքրեց մեր կեանքը մա- շտոյ դարերով կեղեկապատ վերջերս և մեզ մեծ ցաւ պատճառեց: Բայց այդ ցաւը լինում էր ժա- մանակաւոր, որովհետև ուրիշ կողմից նոյն մտաբա- կան ուղղութեամբ շատ վերջեր էլ բռնեց: Իրա համար այժմ փաստեր բերել ես աւելորդ եմ հա- մարում, որովհետև արդէն անցեալ տարիներում բաւական գրվեցաւ այդ մասին թէ Ռուսաստանի և թէ Տաճկաստանի ճշմարտաւէր հայերից:

Այն դարից, այն արթնութիւնը որ մեր երե- տասարորութեանը տուեց «Մշակը», ոչ մէկը չը կարողացաւ տալ որ և ինչ նրա ժամանակակից թերթերից: Քստան և Նինո տարի ես ընթերցում էի այդ պարբերական թերթերը, վրայաստուութիւնե- րը: Հայի կեանքին վերաբերեալ գրեցրը, և քսան և Նինո տարի զանազան տեղերում և պէս պէս հասարակութեան մէջ գտնվելով, մի և նոյն ճշ- մարտութիւնն եմ տեսել: Ինչ որ այժմ «Մշակը» մեր երեսին է խօսում իսկ բացառութիւնները շատ սակաւաթիւ են եղել: Կարողացէք, սկսած «Հիւսիսափայլից» որ իր ժամանակում անզգին զարկեր տուց հայ կեանքին և հայ գրականու- թեան, տեսէք այդ «Հիւսիսափայլի» մէջ թէ ինչ հրէշ տիպեր է դուրս բերում նա հայ հասարակութիւնից: Կարողացէք Ռաֆայէլ Պատկանեանի, Սունդուկեանցի, Ռաֆֆիի, Շիր- վանզադէի, Հարդիի, Համալի, Պաշտանցի և այ- րոց հեղինակութիւնները, որանց մէջ արդեօք չեն նկարագրված այն բարոյական կեղտերը, որ գոր- ծել են հայ ազգի իւրաքանչիւր դասակարգը: Ինչ են գրում մեր պարբերական թերթերի մէջ մեր դասաւանդները,—արդեօք իրանց թղթակցու- թիւններով չեն հաստատում «Մշակի» ասածները ժողովրդի այլ և այլ դասակարգերի անբարոյա- կանութեան մասին, թէ և նոյն լրագիրները, հա- կառակ իրանց սեփական էջերում տպվող փաս- տերի, շարունակում են յարձակվել «Մշակի» դէմ, յայտնելով որ նրա յայտնած մտքերը սուտ են: Մտառացեալ արդեօք հէնց այս անցեալ օրե- բում «Մշակին» հակառակ թերթերում հրատա- բակված թղթակցութիւնները այլ և այլ քաղաք- ներից, որոնք իսկ և իսկ հաստատում են «Մշա- կի» առաջնորդողի ասածները: Կայ արդեօք հայ, որ չը նկատի իր շուրջը այն կեղտոտութիւնե- րը, որ վայել չէ մարդկութեան: Ամեն օր, ա- մեն ժամ տեսնելով և կարդալով հայ անհատնե-

րի, հայ հասարակութեան արտաճեղք համարեա ընտելացել ենք դրան իբրև մի սովորական բանի և մեզ դա թվում է անզգալի: Բայց երբ «Մշա- կը» այդ բոլորը ուսումնասիրելով, այդ բոլորը միասին գումարելով, այդ բոլոր երևոյթների ընդհանուր գումարը մեր երեսին անխնայ է խը- փում,—դա մեզ զգալի է լինում և սաստիկ վի- բաւորիչ: Այն ժամանակ գումար ենք հեռու մեզինց «Մշակը»: Եւ զարմանալիս այն է, որ գոռացողը այն մարդն է, որ պատած է կեղտո- տութիւնով, և եթէ նրա ականջում կամաց փըս- փասս «Թէ քս այս ինչ, այն ինչ բռնած գործը «Մշակի» խօսքն է հաստատում», հաւատարի եմ որ այն ժամանակ նա կարմրած կը լուէ: «Մշա- կի» իսկ զգալիութիւնն էլ այն է, որ ական- ջում մեզմ չէ փոփոխում, այլ հրապարակում գո- ռալով, ականջ է խնայում...

Այժմ, շատ անգամ, մտնելով ընտանիք, հա- սարակութիւն, մանգալով բազարում, մարդու շատ անգամ նկատում է այնպիսի իրողութիւն- ներ որ ականջ մտաբերում է «Մշակի» 95-որդ համարի առաջնորդող յօդուածը... և ծիծաղում, կամ տխրում է: Այդ տխուր ճշմարտութիւնը մի կողմ թողնելով, որոնք զրա գոյութեան պատ- ճառները:

Իմ կարծիքով եթէ հայ ազգը ցրված չը լինէր աշխարհիս երեսին և կենտրոնացած լինէր մէկ երկրում, այն ժամանակ եթէ օտար ազգերը տես- նէին նրա մէջ անբարոյականութիւն, յրաւ իրա- լուց կ'ուսնային մեզ ատելու: Բայց ինչ կարե- լի է պահանջել մի ազգից, որ պարսկի, տաճկի, թուրքի ձեռքի դարերով ընկճված, իր սեփական լեզու, սովորութիւնները, վարք եւ բարքը, հա- զուտը կ'որոգած օտարին է սեպհականել: Եւ շատ ժամանակ էլ չէ որ ուսուց տարրը ազա- տեց հայերին պարսից խաներից, Ղրիմի թաթար- ներից, լեւնական չերքեզներից, Գաղտանի լեզ- գիներից: Միթէ այդ կարծ ժամանակում այդ բոլոր ազգերի ազդեցութիւնից, սովորութիւնից, նրանց բարոյականութիւնից կարող էր ազատվել հայը, քանի որ նա մինչև այժմ չըջապատված է այդ անկաթ ազդեցութիւնով: Եւ այսպիսով կարելի է ասել որ հայը իրան սեպհական լու թէ վատ բարոյական յատկութիւններ չունի այժմ, նա իր սեպհականը դարերի ընթացքում կորցրել է:

Հայը դարձել է մի հայելի, որ արտափայլում է միայն իրան չըջապատող ասիական ազգերի բնաւորութիւնը և նրանց իրան վրա ունեցած ազդեցութեան հետեանքը:

Ուրեմն ինչ է կամենում յարգելի «Մշակի» խմբագիրը հայ ազգից, այդ ճշմարտութիւնները մեր երեսին խօսելով: Իմ կարծիքով, նա մեզինց պահանջում է, որ մենք իբրև հայելի մաքրենք մեր միջից մեզ դարերով չըջապատող ասիական ազգերից ստացած անբարոյական յատկութիւնե- րը, և նրանց փոխարէն արտափայլենք եւրոպա- կան բարոյական ազգերի յատկութիւնները: Ի վերջում այդ համարելի է գովելի գաղափար է, բայց մի և նոյն ժամանակ դրան իրազորելը, գոնէ մօտիկ ապագայում, շատ կասկածելի է, ու որովհետև մենք դեռ ևս խորասուզված ենք ասի- ականութեան մէջ, կաշկանդված ենք ասիակա- նութեամբ: Ճշմարիտ է մենք դնում ենք Եւրո- պա, բայց դնում ենք ասիական բարոյականու- թեան արմատներով, ստանում ենք եւրոպական կրթութիւն և գիտութիւն, յետ են, դառնում տուն մեր ասիական շրջանի մէջ,—և կամաց կա- մաց մոռանալով ժամանակաւորապէս ստացած բարոյականութիւնը, եւրոպական իղէան, փոքր առ փոքր ընդունում ենք դարձեալ ասիականու- թիւնը: Մեր կեանքի սկզբում և կեանքի վերջում ասիական շրջաններով պատած, մեր կեանքի մի ասիական է լինում և նա կուլ է գնում ասիական մեծամասնութեան մէջ:

Գառնալով հարցին միայն այսքան կանստ որ մենք փոխանակ յարձակվելու «Մշակի» խմբագրի վրա և նրան դատաւարտելու, պէտք է ընդհակառակն շատ գոհ լինենք նրանից, որ նա

զարթեցնում է մեր ազգի մէջ մեր բարոյական ինքնաճանաչութիւնը, որ զլխաւոր հիմքն է ամեն ազգութեան և ամբողջ մարդկութեան բա- րոյական գոյութեան, չը նայելով որ նա դրանով մեր անձնական ինքնասիրութիւնը սաս- տիկ վերաբերում է:

Երբ կը լինի, վերջապէս որ մեր հասարակու- թեան մէջ առաջնորդող և ղեկավարող անձինք թողնեն մի կողմ անձնական հաշիւները և ճշ- մարտութեան գաղափարով, միութեամբ զինված աշխատեն նոյն հարցի լուծման համար, աշխա- տեն հնարք գտնել, հայ ազգին ասիականու- թիւնից ազատելու, որով միայն իրանց կոչմա- նը արժանի կարող են հանդիսանալ:

Պ. Մ.

ՆԱՄԱԿ ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻՑ

Հոկտեմբերի 8-ին Ամեն տեղ ուսումնարանները բացվեցան կամ բացվում են, իսկ Վաղարշապատը դեռ ուսում- նարան չունի—ոչ տղայաց, ոչ օրիորդաց ու չէ չինութիւն է այրվում, քանի՞ մարդ է սպանվում, քանի՞ հողի է խաբոււմ, կողոպտվում առևտուրի և ուրիշ յարաբերութիւնների ժամանակ և վերջա- պէս քանի՞ երեխայ է անբարոյականանում, փչա- նում, հասարակութեան համար վնասակար ան- դամ դառնում մեր գիւղի գողերի, աւազակների և զանազան փողոցային անբարոյականացած երե- տասարդների շնորհիւ: Միթէ այս բոլոր վնասնե- րը չարժեն մի որ և է 1500 կամ 2000 բուրլի, որ վաղարշապատից խնայում են իրան ուսում- նարանի համար, չէ որ այդ վնասները մեծ մա- սամբ ուսում չունենալուցն են առաջ գալիս, չէ որ այդ գողերը, աւազակները, փողոցային չըթի- քը եթէ ուսում առնէին և կրթութիւն ստացած լինէին, այսօր միւս պատուաւոր մարդկանց շար- ըում կը լինէին... Մտածենք այս հանգամանե- րների վրա և մենք ինքնուր գիտակցաբար չը վը- նասենք մեզ, չը խնայեն խաւարումներին, չար մտքեր սերմանալներին, եսական մարդկանց, այլ պարզ տեսնելով մեզ չըջապատող շարքերը և իմանալով նրանց դարմանելու միջոցները, աշխա- տենք արմատախիլ անելու և այդ շարքերի դէմ չընկնենք դրա համար մի երկու բուրլ տա- րեկան մարդաղութն վճար տալու: Տարեկան 1500 կամ 2000 բուրլի են ուղում ձեզանց, վա- ղարշապատից, որ ձեր գիւղի գողութիւնը, աւա- ղակութիւնը և անբարոյականութիւնը հեղհեղեղ վերացնեն... սրանից էլ է փան առուտուր... Ին- չնու չէք համաձայնում:

Ս. Տ. Գ.

ՆԱՄԱԿ ՆՕՎՈՐՈՍԻՑՅԱԿԻՑ

Հոկտեմբերի 2-ին Այս ծովի գլխաւոր նաւահանգիստ քաղաքներից մէկն էլ Նովոօրոսկայն է. սա գտնվում է Սև ծովի հիւսիսարևելեան ափի վրա Բաթումից 200 վերստ հեռավորութեամբ: Որովհետև սրա- նից յետոյ այս ծովափնայ քաղաքը մեծ դեր պիտի խաղայ և արդէն մասամբ էլ խաղում է իր բազմակողմանի հարողակցութեան յարմա- րութեամբ, ուստի աւելորդ չի լինի մի փոքր ըն- դարձակ խօսել այս քաղաքի մասին: Նովոօրոսկայի շրջակայքը խոկապէս պիտի հա- չել Արեւազիայի մի մասը և որովհետև այս քաղաքը չունի ոչինչ պատմական հնութիւն, ուրեմն և պիտի եղբարիակել, որ սա նորահաս- տատ է, ինչպէս պատմում են մօտ 1800 թ-ին Պատերազմների ժամանակ այս ծովածոցը ծառա- յել է իբրև նաւատորմի փակաստան տեղ, ա- վից հանած հինգ հատ հին ձեռք ձեռք մեծազիւ պացոյց սրան կարող է ծառայել նորիւրում ծո- վային անած են ծովի ափին և Ս. Պետրբուրգ պիտի ուղարկեն: Այս քաղաքը ծովի մակերևոյ- թից մօտ 80 ֆ. բարձր է կանգնած և ձգվում է նորարոյս անտառապատ լեռանց մէջ: Եթէ Նովո- րոսկայի ամեն կողմից պակասաւոր լինի, դար-

Այդ հակադրակ պայմանները խոստովանում են մտքի ազատությանը: Ռուսաստանը պնդում է իր պահանջները վրա, գեներալ կառավարության պատերազմը բողոքարկի շատ անկիւններում, կրկին այդ պահանջները: Բողոքարկան ուսուցիչ հրկայտությունները անդադար չայտնում են ուսուցիչ կառավարությունների ցանկությունը: Կառավարիչ կողմից պարբերաբար յայտարարել են ներկայացվում բողոքարկան կառավարությունները իսկ միև կողմից երկու կողմից պետությունները առևելի և առևելի անորոշ քաղաքականություններ են արտայայտում: Տխրալի ճանաչելիս, Ձերիլի ճանաչարհորդությունից մինչև այժմ որոշ մի հայեցող այլ ևս չէ արտայայտված երկու կողմից պետությունների կողմից: Իրերի այդ դրությունը միանգամայն ծանրացնում է Բողոքարկայի վիճակը: Երկրորդ ճգնաժամի մէջ է: Ինչ անել, որ կողմը թեքվի:—հաս այն հարցը, որի մասին այժմ մտածել պէտք է: Այդ հարցը շուտով լուծելու համար՝ տարաբողոքաբար Բողոքարկայի այժման գործիչները միակամ չեն գործում: Ցանկով շարունակում է պնդել իր առաջվայ ցանկությունները: Հեռագրիները սուտ տեղեկությունները երևում է, որ կարավելով էլ բաժանվել է կառավարչական կուսակցությունից և համերայն չէ նրանց հետ: Իսկ Ստամբուլով ստիպված է, —եթէ հաւատալով վերջին տեղեկություններին, ասել թէ սկսել են, կործան ցաւում է, և բժշկաների խորհուրդով իբրև թէ պէտք է հեռանալ դէպի Բողոքարկայի հարաւային անկիւնները: Բողոքարկան կամ դէպի աջ կամ դէպի ձախ կը գնար, —եթէ երկու կողմից պետությունները որոշ և պարզ կերպով իրանց կամը յայտնէին: Այն ժամանակ այդ փորձի երկրորդ ստիպված կը լինէր գեթ առ ժամանակ հաշտվել հանգամանքներին հետ: Գործերը առևելի բարձրում են, և գուցէ Ռուսաստանն էլ ձեռք կառնի վերջնական և կարական մի միջոց՝ իր նպատակին հասնելու համար: Իսկ եթէ ազգային ժողովը, միանգամայն անկախ կերպով կը սկսի իր պարագլուխը և կը լուծէ այն բոլոր հարցերը, որոնք պէտք է լուծվեն սահմանադրության դրույթները:—և այդ բոլորը կանի նախ քան թէ արտաքին քաղաքականությունը մի որոշ դիրք բռնած կը լինի, —այն ժամանակ Բողոքարկան կընկնի մի խոզորո ճգնաժամի մէջ, որի ժամանակահատվածները կարող է թուլանալ երկրի քաղաքական ամբողջ կամը: Այդ կը լինի մի տըխուր ճգնաժամ, առևելի տխուր հետևանքներով: Իսկ թէ այդպիսի դրույթներ համար, որքան նախապատրաստված է պատանի Բողոքարկան, որքան բարեկամը են երկրի բարոյական, մտաւոր և անտեսական հանգամանքները դիմանալու առևելի ծանր յուզմունքներին, որքան որոշ և անյետադարձ են երկրի ազգային մասին բողոքարկան երկրասարդությունը, կառավարությունները կարողանան իրենց իրենց հարգողները, Սօֆիայի դիվանատիան, —դրանք բոլորն էլ այնպիսի հարցեր են, և այն էլ այնպիսի կազմակերպություններ:—որ առևելի ցանկալի են դարձնում մի վերջնական դրույթներ հաստատվելը, և այն էլ՝ որքան շուտ, այնքան լաւ:

ՆԱՄԱԿ ՊԱՐՍՎԱՍԱՆԵՑ

Դարձեթ, 11 հոկտեմբերի

Նախորդ նամակում խոստացել էի Արամեան դպրոցի մասին գրել: Արամեան երկուսու դպրոցները հարցաքննությունները սկսելով յունիսի 1-ից, վերջանան նոյն ամսի 20-ին: Թէ աշակերտները և թէ աշակերտուհիները առհասարակ բաւարար յաջողություն ցոյց տուին, առևելի քան կարելի էր սպասել: Արամեան արական սեռի դպրոցն ունէր 2 նախակրթարան և 3 հիմնական դասարաններ 110 աշակերտներով, իսկ իրական սեռի դպրոցն ունէր 2 նախակրթարան և 1 հիմնական դասարան 28 աշակերտուհիներով: Ռուսացիների թիւն էր 7, ուսուցչուհի 1, առանց տեսչի և առանց վերակարգի: Լեզուները և առարկաներից առանցվել են հետևանքները, հայերէն, պարսկերէն, ռուսերէն, ֆրանսերէն, կրօն, ձայնագրություն, թուրքերէն, քնական պատմություն, գծագրություն, ֆիզիկա, ազգային և ընդհանուր պատմություն և աշխարհագրություն: Օրիորդաց մասում միայն առանցվում էին կրօն, ձեռագործություն, հայերէն լեզու, թուրքերէն, աշխարհագրություն, ազգային և ընդհանուր պատմություն: 8 ուսուցիչները միասին վերաբուծ 3,000 նում են եղել ուժիկ 980 թուլան կամ 3,000 բուլը, որը իրար վրա հայտնելով հազիւ թէ լուրագանչիւր ուսուցչին 400 բուլը է գալիս: Ինչ-

պէս նկատվում է, մի նշանաւոր ուժիկ է, մասնաւոր ուսուցիչները մի և նոյն ժամանակ հերթով վերակարգություն են անում և ուսուցչական ժողովում էլ տեսչի պարտաւորություններ են կատարում: Նախ քան կը խոսեիք Արամեան դպրոցի լաւ և վատ կողմերի վրա, հարկաւոր է իմանալ, թէ նա ինչ ուղղութիւն ունի և որ տեսակ դպրոցներին է:—Արամեան դպրոցի նպատակն է բարձր դպրոցներին համար աշակերտներ պատրաստել, և այդ նպատակով էլ հիմնված է: Իսկ նա թէ և մի ծխական դպրոց է, որովհետև Գավրէթ քաղաքի ներքին թաղում, ուր զետեղված է Արամեան դպրոցը և ուր բնակվում են հայերը, բացի այդ միակ դպրոցից, ոչ ուրիշ ծխական դպրոց և ոչ մի մանկական պարտէզ կայ, որտեղ հայ մանկիկան կարողանար իր մանկական թոժովանքը բաց առնել և իր սկզբնական ուսումը սովորել: Ուրեմն հետևում է որ նա մի ծխական դպրոց է և նրա դասարաններն էլ դրանից առևելի չեն խոտանում, թէ և հանգամանքի բերմամբ նրա մէջ 4 լեզուներ միանգամայն մուտ են գործել: Էլ չենք ասում, թէ Արամեան դպրոցը մանկական պարտէզ էլ է, քանզի նոյն թաղի հայոց 6, 7 և 8 տարեկան երեխաները դալիս և նրա նախակրթարաններն են մտնում, դուրկ ընտանեկան դաստիարակությունից և դուրկ սկզբնական ուսումից: Ուրեմն հետևում է որ Արամեան դպրոցը թէ միջնակարգ դպրոց է, թէ ծխական դպրոց և թէ մանկական պարտէզ միաժամանակ: Մի այդպիսի դպրոցում, ուր առանձնում են 4 լեզուներ և 10 այլ և այլ ուսման առարկաները 3 հիմնական դասարաններում, զարգացնել աշակերտներ ամենեկին կարելի չէ սպասել, ինչպէս պահանջում են ուժեղ Շատ շատ ասելը, աշակերտները մի այդպիսի դպրոցում այդչափ լեզուներ և առարկաների սկզբունքը միայն կարող էին ձեռք բերել, ինչպէս որ դպրոցի նպատակն էլ, ինչպէս ասացինք, այդ է: Էլ չենք ասում, որ չորս լեզուներ բազմազան և բազմազանով կանոնները և հնչմունքները այնպէս նուստում են աշակերտներին և զրուսեցնում, որ աշակերտները միև կարգաբարձարական առարկաներից բաւական օգուտ չեն քաղում: Ինչպէս փոխական դպրոցում միայն կարելի է չորս լեզուներ սովորեցնել, այն էլ կարող և հասակաւոր աշակերտներին և ոչ թէ այնպիսի դպրոցի աշակերտներին, որ 6, 7 և 8 տարեկանից սկսում է և 5 տարեկայ դասընթացից յետ հազիւ թէ 12 կամ 13 տարեկան է դառնում: Հանգամանքի բերմամբ այդքան լեզուներ այդ դպրոցում մուտք են գործել, դոցանից հայերէնը և պարսկերէնը իբրև ազգային և տեղական լեզուներ, ռուսերէնը իբրև դրացի և անհրաժեշտ լեզու, իսկ ֆրանսերէնը իբրև ընդհանուր հարողակցութեան լեզու: Հասկանալի է, որ դրանց չորսն էլ միջ քան զմիւսն կարեւոր են, նա մասնաւոր ուր արդէն 10 տարի է որ սկսվել և սովորութիւն է դարձել, բայց եթէ հնար լինէր, փոխանակ լեզուներ, զարգացողական առարկաներին ուժ տրվէր, այն ժամանակ գուցէ թիչ ու շատ զարգացած աշակերտներ դուրս գային այդ երեք դասարաններն դպրոցից, որ այդչափ մեծ հուշակ է տարածել իր շուրջը: Իսկ եթէ այսպէս շարունակվի և նրա նիւթականը սովորական դերոյից մի աստիճան չը բարձրանայ, նա միշտ այդպէս էլ կը մնայ և նրա երրորդում աւարտող աշակերտները մեծ պաշարով դուրս չեն գնալ դպրոցից: Գաճախակ է պարսկականին մտածել նրա նիւթականին և բարոյականին մասին: Գալով ուսուցիչներին պէտք է ասել, որ մեծ վարձատրութիւն չեն ստանում և Ռուսաստանում եղածի չափ արձակուրդներ չունեն, համարեն թէ 10 ամբողջ ամիսներ ուսումը շարունակվում է: Այնու ամենայնիւ ժողովուրդը կարծում է, որ ուսուցիչները մեծ ժամանակ են թողնում դպրոցի երկամեսայ ամբարային արձակուրդների ժամանակ, հաստատվելով այն սխալ կարծիքի վրա, որ աշակերտները որքան շատ օրեր յաճախան դպրոց և որքան էլ օրվայ մեծ մասը առևելի միան դպրոցում առևելի էլ կը սովորեն, թէկուզ հէնց ամառային տոթակէզ օրերում լինէր այդ: Ուղեղի հոգնելը և ֆիզիկական ուժերի թուլանալը և ուրիշ այդպիսի խօսքերը երբ լսում է ժողովուրդը՝ ժգտութեամբ է միայն, առևելի ոչինչ: Գեւ Արամեան դպրոցի գոյությունն ենք պարտական, որ Գաւրէթի երկամասարաբար մէջ երևում են երբեմն երբեմն նորանոր մտքեր, ընթերցանութեան վրա սէր, ազգային մտածմունքներ, թատրոնական ներկայացումներ և այլն: Սակայն կան տեղեր պարս-

կանայոց մէջ, որ Արամեան դպրոցը և Գաւրէթի հայ հասարակութիւնը օաղիսներ կարող են համարվել մի ահազին անապատի մէջ: Ընացած հասկանալի է: Որքան էլ որ մի թեմական ընդհանուր տեսչի կարեւորութիւնը զգացվում է, բայց դրամական միջոցները այնքան և այնքան հեռու են փախչում պարսկականից, մասնաւոր վերջին մի քանի տարիների ընթացքում, որ ամբողջ Պարսկաստանը գտնվում է դրամական և առևտրական դարհուրելի տագնապի մէջ: Ինչքան է կարելի անել, եթէ որ դրամական միջոցները ըստ ամենայնի բարեկարգ դրույթներն մէջ լինեն: Բայց քանի որ անարժաթ ժամանակի մէջ ենք սպասում, լաւ է որ խնայողութիւնը նպատակ բռնելով, եղածից օգուտ քաղել: Լաւ կը լինէր, ասացինք, որ փոխանակ փոքրահասակ երեխաներին 4 լեզուներ ընտանի ընտանիքում և նուաճող կանոնների տակ կամը դարձնելու, օգտակար և հրահանգիչ առարկաներով զարգացնել երիտասարդներ և գործի մարդիկ պատրաստել: Արդէն Պարսկաստանի բոլոր հայաբնակ քաղաքներում և գիւղերում թիչ թիչ պահանջ է զգացվում ուսեւլ քահանայների, գաւառական ուսուցիչների և այլն: Ո՛վ այդ տեղական պահանջներին կարող կը լինի բաւականութիւն տալ, չորս լեզուց տարեբար սովորեցնել: Ո՛չ բնաւ Լեզուներ սովորելով և ֆանֆաթուն դառնալով, ոչինչ չի լինի, այլ պէտք է նայել թէ մեր շրջակայքում ինչ քանի կարելի կայ: Եթէ Արամեան դպրոցը իրեն համար նպատակ ընտրած լինէր գաւառները մի տասնեակ աշակերտներ բերել տալ և նրանց մի քանի տարվայ ընթացքում գիւղական քահանայ կամ ուսուցիչ պատրաստելով վերադարձնել իրանց տեղերը, որպէս զի նրանք էլ իրանց գիւղերում հարկաւոր տգէտ երեխայոց և չափահասների միտքը մշակելու, այդ նպատակը Արամեան դպրոցի այժման նպատակից տասն անգամ առևելի արժէր: Թողնե՛ք ուրիշ գաւառները, այսօր ամբողջ Ղարաբաղ գաւառում մի հատ հայ ուսուցիչ չունենք: Արդէն բաւական թուով դպրոցաւարտ աշակերտներ կան այսօր, որ պարագ և անգործ մնալով շուրարած են թէ ինչ բանի մէջ պէտք է գործածեն իրանց սովորածները: Նրանք յուսահատվում են չը դտնելով իրանց յարմար պարագած շրջան: Նրանց մտում է մի ելք—երկրվել պարագութեան ուղիւնստում և սովորածները մուսուլալ: Տեսանք ուրեմն, որ Արամեան դպրոցը մի որոշ նպատակի չէ ծառայում, որ համապատասխանէր տեղական շրջակայքում պահանջներին: Սխալ չէ լեզուագէտ պատրաստելու նպատակը, բայց պէտք է դպրոցից դուրս նկատել թէ արդե՞ք լեզուագէտ փնտորներ կան: Եւ զարմանալին այն է, որ կան մարդիկ հէնց այսօր, որ կարծում են թէ ուսում և գիտություն կայանում են միայն լեզուներ իմանալով: Ել, ով լեզուագէտ է, նա ամենագէտ է: Վերջապէս ով լեզուներ գիտէ, նա կարող է իրան սեփականացնել աշխարհի բազմազան գիտությունները և դէպքերը այնպէս շուտ, այնպէս արագ, ինչպէս ծիտը շուր է խմում:

Նկարագրելով Արամեան դպրոցի լաւ ու վատ կողմերը, մենք գալիս ենք մեր սեփական եզրակացութեամբ այն հայեցակէտին, որ նրա այժման նպատակից ազգը շատ թիչ է չափում: Հարկաւոր է յուսախաբութեան խանձարդից դուրս գալ, անցնել կորուսած բաւ համարել և այսուհետև մտածել իրական և իսկական շահերի մասին: Առևելի նպատակայարմար կը լինէր դպրոցը բաժանել երկու մասի, նրա լեզուագիտական մասում սովորեցնել լեզուներ, իսկ միև մասում պատրաստվելին գաւառական ուսուցիչը և այլ գործի մարդիկ, կամ եթէ ոչ միանգամայն թեմական դպրոցի գիւղը ընդունելու: Հարկաւոր է ուշ դարձնել այն երևոյթի վրա, որ դպրոցաւարտ աշակերտները, —եթէ որ մի քանի տարի անգործ մնան, բոլոր իրանց սովորածը կը մոռանան: Որքան էլ որ պատճառաբանելիք թէ դրամի և առևտուրի կրկին կար մեր երկրում, այնու ամենայնիւ պէտք է աշխատել նրանք համար գործ և պարագլուխը ստեղծել, այլապէս անկարելի է որ դպրոցաւարտ աշակերտը լինի այն, ինչպէս որ լինում է մի այլ դպրոցաւարտ աշակերտ մի քանի քանակ գործերի և պատճաններին մէջ իր իմացածը գործածելուց յետ, փորձ և հմտութիւն ձեռք բերելուց յետ: Պէտք է իմանալ և այն, որ բոլորը դպրոցում չեն սովորեցնում աշակերտին, այլ նա պէտք է որ մեծ օգուտ էլ քաղէ դրսի զարգացած շրջաններից և այլ և այլ պարագլուխները: Հայը ուր որ էլ լինի, նմանվել է սիրում, նմանողութեան է հետևում առևելի, քան թէ իր դիրքը և իր շուրջը հետազոտելով է առաջ դրնում: Հայը վճռական քայլեր չէ սիրում, նրա համար որ նորից վերադառնայ իր առանցքի վրա—իր մի քանի տարով առաջ կանգնած տեղը, որպէս զի առիթ ունենայ առևել թէ՛ ւտեստը, իմ ասածը կատարվեցաւ, տեսար որ քո ասածը չէր, իմ ասածն էր:» Արամե թէ և տխուր եզրակացութիւնը են, բայց ինչ արած որ ճշմարտանման են: Շօշափելով մի այնպիսի ծանրակշիւ խնդրի մեր սեփական հայեցողութեամբ, ի հարկէ, գուտ ճշմարտութեան չենք հասել և բոլորը սրա մէջ չէ կայանում: Գպրոցական խնդիրների վրա պէտք է շատ անգամ գրել, և որքան առևել գրվի, այնքան էլ նրա թերութիւնը և առաւելութիւնը մեր աչքի առաջ առևել պարզ կը պատկերանան և իւրաքանչիւր ոք կարող կը լինի մի դաղափար կազմել: Ներկայ ուսումնական տարոյս մէջ բացվեցաւ Արամեան դպրոցի չորրորդ դասարանը, գուցէ մինչև մի քանի տարի հիշագրող և վեցերորդ դասարաններ էլ կը բացվին, եթէ նրա կողմից միջոցներ լինեն, այն ժամանակ կարելի կը լինի յուսալ, որ Արամեան դպրոցը մի թեմական դպրոցի դեր կարող է խաղալ Արարատականի հայոց համար:

Արմենակ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Հոկտեմբերի 7-ին Բերլին հասաւ Ֆրանսիական դեսպան Էրբեստ և ընդունվեցաւ Հերբարտ Բլամարի կողմից: —Արմենակ տպարանների բանուրները գործադու արեցին: Լրագիրների հրատարակութիւնը մի քանի ժամանակ այդ գործադուները պատճառով անկանոն դարձաւ: 23 դրաչարներ տուգանքի ենթարկվեցան դատարանի կողմից: Այդ խառնակութիւնների պատճառով մի լրագիր մինչև անգամ հրատարակվեցաւ մի քանի ժամանակ մի դատարկ երեսով, որին կայցնում էին վիճաբար զարգաբական տեղեկութիւններ: —Հոկտեմբերի 7-ին, ինչպէս գրում են Ֆարիդի, կայացաւ միջխտրների խորհուրդը: Քննվեցաւ ներքին գործերի և ֆինանսների միջխտրների հրաժարականների պատճառը: Բացատրութիւններից յետոյ երկու միջխտրներն էլ յետ վերցրին իրանց հրաժարականները: —Եւպոնիայում խօսքերան շարունակում է մեծ կոտորածներ անել: —Գուրլինից հաղորդում են, որ այժմ ժողովուրդը վերջին յուսահատութեան հասած, կատաղի կռիւներ է տալիս ոստիկանութեան հետ, երբ վերջինս փորձում է քշել կապալառուներին կարուածատներին հողերից: —Վիեննայում հրատարակվեցան պաշտօնական տեղեկութիւններ Աւստրո-Ունգարիայում այժմ տարածվող խօսքերի մասին: Եւրոպական մի քանի լրագիրների թղթակցները շատ վատ են խօսում տեղական իշխանութեան անհողութեան մասին: Խօսելով իշխանութեան թողութեան մասին, Պէշտի լրագիրներից մէկը ասում է. «բացի ստիական խօսքերից, մենք ունենք և ստիական կառավարութիւն:» —Սօֆիայից գրում են, որ այնտեղ անհանգստութեամբ են նայում Գաղան-Ֆէնդիի Սօֆիա վերադառնալու վրա: Այդ մարդը համարվում է ուսուցիչ քաղաքականութեան կողմնակից: —Սերբիայի թագաւոր Մլան վերադարձաւ Սերբիա հաղորդում են, որ Մլան գահ է մնացել իր ճանապարհորդութեան հետևանքներից: —«Poll. Corr.» լսել է, որ իբրև թէ երկու կողմից մի քանի պետություններ հաւանութիւն չեն տալիս իշխան Ալեքսանդր Բատտենբերգի վերջնարկութեանը: —Խօսելով Բողոքարկայի այժման գործերի մա-

մին, յիշելով Բուզարիայի ներքին գործերը և արտաքին կողմից եղած ազդեցությունը՝ «Allg. Zeit.» լրագրի թղթակիցը ասում է. Բուզարիայում չը կայ անկախ երկրաստարգրություն. կան միայն պաշտոնեաներ և զիւղացիներ. առաջինները ամենից բարձր են դասում իրանց տեղերը և պաշտոնները: Սրանք ծագում են զիւղական դասակարգից, ուստի մեծ կապ և ազդեցութիւն ունեն նրա վրա, որով և բացարձակ է զիւղական դասակարգի և պաշտոնեաների հակա-առասական քաղաքականութիւնը: Օֆիցիւրները նոյն քաղաքականութեան են հետևում, չը կամենալով ուսուցիչներ լինելու դարձը: Այդպիսով ինքնակալութեան դիրքը բաւական հաստատ է: Բուզարիայում սխալվել է մի բանի մէջ կարծելով՝ թէ զինեցող կառավարչի գործունէութիւնը բաւական է ինքնակալութիւնը վայր գցելու համար: Այդ պատճառով Բուզարիայի դրանքը Բուզարիայի կողմից դառնում է հաւանական...»

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՆՍՍԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆՆԵՐ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 17 հոկտեմբերի: Հրատարակված է պետական խորհրդի հետևեալ կարգադրութիւնը. Էքստրադիկտի դատարի կողմից նշանակված ուսուցիչները, որ պէտք է արվեն այն անձանց, որոնք ընտրված են քաղաքային ինքնակալութեան կողմից, չէ կարելի ոչ դադարեցնել, ոչ էլ փոքրացնել մինչև այն ժամանակ, որի համար ընտրված են, կամ, եթէ այդ անձինք ինքնակալ կը թողնեն իրանց պաշտօնը ժամանակավորացի առաջ:

ՏԻՐՆՈՎՈ, 18 հոկտեմբերի: Գեներալ կառավարութեան քաղաքային հետազոտող, որով առաջարկում էր ազատել ձերբակալված սպաներին, գեներալը պահանջում է շուտափոխ պատասխան: Մի ուրիշ հեռագրով գեներալը խորհուրդ է տալիս վերցնել Սօֆիայում զգալի քանակությամբ Միխայիլի խորհուրդը վճուեց ազատել ձերբակալված սպաներին: Վարնայի ուսուցիչ զինվորական գնահատիչը հիւպատոսարանի և ազգաբնակչության մի մասի դէմ իշխանութեան ձեռքով գործ դրվող մեքենայութիւնների դէմ, և ապառնաց, որ կը դիմի խիստ միջոցների, եթէ այդ ինտրիգաները չեն վերջանայ:

ՎԱՐՆԱ, 18 հոկտեմբերի: «Память Меркурия» նաւը 18 զէնքով և 418 մարդուց բաղկացած զօրաբաժնով, երէկ առաւօտ այստեղ հասաւ: Հէնց երէկ Վարնա եկաւ Բուզարիայի պատերազմական միջխորտը:

ԺՈՒՐՅԵՎՈ, 18 հոկտեմբերի: Բուզարիայի պատերազմական միջխորտը ծառայութիւնից արձակեց Դուրապետ երեք շտաբ-օֆիցիւրներին, նոցա դէպի Ռուսաստանը ուղարկեց համակրութեան և զինեցող կառավարչի հետ կապած յարաբերութիւնների համար: Կարակիւզով վերջնականապէս բաժանվեցաւ ինքնակալութիւնից:

ԼՕՆՈՎՈ, 18 հոկտեմբերի: Ազգայնաստանում գիւղացիների ցեղը պատասխանեցաւ Ազգայնաստանի էմիրի դէմ: Արքունական գանձարանը տեղափոխելու ժամանակ պահպանութեան համար նշանակված գունդը ջարդվեցաւ ապստամբների կողմից: Ապստամբութեան պատճառը ծանր հարկերն են:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 19 հոկտեմբերի: Այսօր Ալէքսանդրեան լիցիտը տօնեց իր եօթնամասուն ու հինգ ամեակը: Հանդէսին ներկայ էին մեծ մասամբ լիցիտում ուսում առած մարդիկ, որոնց մէջ էին և արտաքին գործերի միջխորտը և ազգային լուսարարութեան նախկին միջխորտ Գօլովին Լիցիտի:

Եկեղեցում մաղթանք կատարեց լիցիտի կրօնասոյցը: Մաղթանքից յետոյ հիւրերը հաւաքվեցան ակտային դահլիճը, որտեղ չորս կայսրների պատկերները շքեղ կերպով դարգարված էին ծաղիկներով: Ակտային դահլիճից հիւրերը և ուսանողները գնացին սեղանատունը, որի ժամանակ հեծկազորքի նուազածուները խոսքը նուազում էր մարչը: Նախաճաշիկից առաջ հիւրերը և ուսանողները միասին երգեցին աղօթքը: Նախաճաշի ժամանակ Արխանգելսկոյ երգչիկ խումբը երգեց առաջնաւարտ ուսանողների հիմնը, իսկ նախաճաշիկի վերջում՝ եօթնամասուն հինգամեակի յիշատակի հիմնը: Թագաւոր-կայսրի կենացը առաջարկված ստոր ընդունվեցաւ հանդիսաւոր շուրջով: Եւ Ազգային հիմնով: Բոլոր ներկայ եղողներին սերվեցան մասնաժողովի կողմից հրատարակուող, որով հրատարակում են հաւաքվել հոկտեմբերի 22-ին, ստորագրութիւն բանալու լիցիտի պղծում Ալէքսանդր I-ի արձանը կանգնեցնելու համար:

ԺՈՒՐՅԵՎՈ, 19 հոկտեմբերի: Տիրնօլից եկած տեղեկութիւններից երևում է, որ Բենդերով և Գրուեվ այսօր, գրաւականները ներկայացնելուց յետոյ, կազատվեն ձերբակալութիւնից:

ԺՈՒՐՅԵՎՈ, 19 հոկտեմբերի: Այսօր, առաւօտեան 11 ժամին քաղաքային բազարական ազգային ժողովը, նախապատրաստական ժողովների ժամանակ, որոնք տեղի էին ունենում վերջին օրերի ընթացքում, բազարական կառավարութիւնը անդադար աշխատում էր պատգամաւորների առաջ աղաւաղել ուսանողի Բուզարիայում ունեցած քաղաքականութեան բնակչութիւնը և նպատակը: **ԺՈՒՐՅԵՎՈ, 20 հոկտեմբերի:** Գեներալ կառավարչի ուղիմաստունին պատասխանելով, ինքնակալութիւնը ինքրեց մասնացոյց անել այն ուսուցչատաններին, որոնք երկարկիցաւ անարդարեաներին: Արէֆիկոսեանը հրամանագրված է խտտութեամբ վերահսկել ուսուցչատաններին հովանաւորելու մասին և պատժել մեղաւորներին: Ժողովի նստաշրջանը, երեկ, կարճատե կը լինի:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՈՐՍՍ

Հոկտեմբերի 20-ին

Ռուսաց 1 բուքը Լժուզօնի վրա արժէ	22 ³¹ / ₃₂ պէնս.
— — — — —	195 ¹ / ₄ պֆ.
— — — — —	242 ¹ / ₄ սան.
Ոսկի — — — — —	8 ր. 62 կ.
Մարտային կուպոններ — — — — —	167 > 1/4 >
Արծաթ — — — — —	1 > 33 >
Բորսային դիվիդենդներ — — — — —	4 1/4 և 6% >
Պետակ, բանկ. 5% տոմս 1-ին շրջանի	100 > 50 >
— — — — —	2-րդ — 100 > 25 >
— — — — —	3-րդ — 100 > — >
— — — — —	4-րդ — 99 > 62 >
— — — — —	5-րդ — 99 > 75 >
Արեւելեան 5% փոխառութ. 1-ին շրջ.	99 > 12 >
— — — — —	2-րդ — 99 > 25 >
— — — — —	3-րդ — 99 > 25 >
Նիդերլան 5% առաջին փոխառութ.	239 > 50 >
— — — — —	222 > — >
5 1/2% ռէնտա	105 > — >
Ոսկեայ ռէնտա	186 > 50 >
Նոր կոնսոլիդաց փոխառութիւն	159 > 50 >
5% գրաւական թղթեր կալուած.	— > — >
— — — — —	161 > 25 >
5 1/2% գրաւական թղթեր խրատների կալուած. բանկի	95 > 25 >
6% գրաւակ. թղթ խրատների կալ. բան.	101 > 50 >
— — — — —	101 > — >
— — — — —	101 > 50 >
— — — — —	101 > 50 >
— — — — —	101 > 50 >
— — — — —	101 > 50 >
— — — — —	100 > 50 >
— — — — —	100 > 37 >
— — — — —	101 > — >
— — — — —	27 և 43 ար. 97 > — >
— — — — —	18 և 43 ար. 97 > — >
Վճռակալ-կամակի բանկի ակցիաները	575 > — >
Ռուսաց երկաթուղիների պլանա. ընկ.	263 > 50 >
Բիբլոսկ-Վ. օրգովի ընկ.	97 > 25 >
Ս. Պետերբուրգի քաղաքային օբլիգացիաներ	94 > 37 >
Մոսկովայի քաղաք. օբլիգացիաներ	95 > 25 >
Օրգէսայի	93 > 75 >
Նոր կոնսոլիդացիայի ռէնտա	98 > 37 >
Թիֆլիսի քաղաք. կրեդ. ընկ. օբլ.	86 > — >
Պետական բանկի 6-ի հրատարակութեան տոմսերը	— > — >
Ս. Պետերբուրգի բորսայի սրահայրութիւնը հանդարտ է:	— > — >

Խմբագիր-հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐՄԵՐՈՒՆԻ

Պատկերազարդ ԳԱՍԱԳԻՐԻՆԻՔՆԱՍՏՈՒՍՈՒՑԻՉ ՌՈՒՍԱՑ ԼԵՋՈՒԻ Լ. Խան-Աղանցի. գրավաճառների մաս 20 կոպէկ:

15—24 (Հ.)

COMPAGNIE DES MESSAGERIES MARITIMES
PAQUEBOTS-POSTE FRANÇAIS.

ՅՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱԽԳՆԱՑՈՒԹԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
(ՄԵՍԱԺՐԻ ՄԱՐԻՏԻՄ)

Կանոնաւոր և ուղղակի երթևեկութիւն ՄԱՐՍԵԼԻ և ԲԱՌՈՒՄԻ մէջ և փոխադարձ: Հինգշաբթի, 30 հոկտեմբերի, ԲԱՌՈՒՄԻՑ դուրս կը գնայ շոգինաւ TIGRE (ՏԻԳՐ) նաւակաւ ԲՕՆՆԵՖՈՒԱ (BONNEFOY) դէպի Կ. Պոլիս և Զմիւռնիա և յարակցելով Եաֆա, Պորտ-Սայդ և Ալէքսանդրիա գնացող ընկերութեան շոգինաւերի հետ: Տեղեկութիւնների մասին պէտք է դիմել ԲԱՌՈՒՄ և ԲԱԳՈՒ պ. պ. ԲՈՒՐԻ-ԿԷՍՐԻՆ և ԸՆԿ. իսկ ԹԻՖԼԻՍՈՒՄ ԳԵՌՈՐ ՀԵՋՈՒԹԵԱՆ ՀԵՋՈՒԹԵԱՆՑԻՆ: 1—3

Պատիւ ունեմ յայտնելու, որ ուսուցչից հայերէն բառարանը օգտատուի 10-ին յանձնվեցաւ տղ-պարսիսէն Բաժանարարութիւնը շարունակելու է մինչև մարտի մէկը: Մտորագրվել ցանկացողները թող բարեհաճեն դիմել Թիֆլիս պ. պ. Յակոբ Տիգրանեանցին, Մոսկու Թաւաղեանցին, Գրիգոր Շարաղաղեանցին (ուսուցիչ) և Լևոն Մելիք-Աղանեանցին: Բազմ. պ. Ալէքսանդր Միխայիլեանցին (Աւետար. բանկում): Ալէքսանդր պ. պ. Միխայիլ Արաքաջեանցին Ախալցխայի պ. Յովհաննէս Մուրաֆեանցին: Միակն զպրոցների ուսուցիչները կարող են բաժանարարները (5 ր.) վճարել ամսական մի մի բուքի: Այսուհետ ինձ կարելի է դիմել հետևեալ հասցեով՝ Эривань Инспектору Армянской Духовной Семинарии Доктору Абесолому Иоаннисянц.

Արխանդմ Յովհաննիսեանց 10—10



ԵՄԻՆ ՏԵՐԳՐԻԳՈՐԵԱՆՑ

ԶՐԿԱՆՔԻ ԶՈՂ

Վաճառում են 80 կոպէկով Թիֆլիսի գրավաճառանոցները և Սրբանում հեղինակը 1—10

ԶՕԿՕԼԵՐ

Ս. ՍՈՒՆ Կ ԸՆԿ.

(II, 4857.) 35—50 (Կ)

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՈՐՍՍ ԲԱԺՆԻ ԿՈՂՄԻՑ ԹՈՅԼՏԻՈՒԹԻՒՆ ՍՅԱՑԱԾ ՀՆԴԻԿԱԿԱՆ ՄԿՆԵՐԷՂ



ՄԵՆ ԵՒ ՓՈՔՐ ՄԿՆԵՐԸ կատարելապէս ոչնցանելու համար Արկղիկի գինը 1 ր. 50 կ. Արկղիկի 1/4 արժէ 60 կ.:

Հեղուկ բաղնիքի ջնիքի դէմ: Սրտակի դի-նը, վրձնիք միասին 1 բուքի:

Լուս, ցեց, բողոճ ոչնցանելու փոշի: Գո-լիւսաւոր պահեաւ ԹիֆլիսՈՒՄ գանձում էվ. Գրիվն ա կի դեղատան ապրանքների մազա զինում, «Լժուզօն» հիւրանոցի տակ, Զուբալովի տանը:

րակի գինը 1 ր. 20 կ. գուտապէրի մեքենան առանձին, 1/2 զօրակ 65 կ. Սմբակային օժոռն, իսկ Գուտամանի, ձիերի սմբակները ամեն օր օժեկու համար, պահպանում է սմբակը ճարտար և նախկին միջոցին թուլանալուց: Գորակի գինը 1 բուքի:

Կուղբի ճարպի օժոռն, պահում է խոնաւութեան դէմ և կակուղ դրութեան մէջ՝ կօշիկները, բառնները, ձիերի ամսաները: Գինը 75 կօպ. Մազերի ներկ, սև, շագանակադոյն և չէկ Մի անգամ ներկված մազերը իրանց գոյնը պահում են մինչև վեց շաբաթ: Ներկված մազերը չէ կարելի դառնալու ընկան մազերից: Արկղիկը 3 բուքի:

Իլա. Գուտաման 21—100

ՄԻ ՀԱՅ ՌԵՍՏՈՒՑԻՉ ցանկանում է ՊԱՇՏՈՆ ունենալ հայոց դպրոցներում: Պայմանների մասին դիմել «Մշակի» խմբագրատունը: 2—3

Գէորգեան ճեմարանի վկայական ունեցող մի երկրասարդ, ուսուցչի պաշտոն է ուղղում ունենալ հայոց դպրոցներում: Պայմանների մասին դիմել «Մշակի» խմբագրութեանը: 2—3

ՎԿԱՑԱԿԱՆ ՌԵՆՏՈՂ ՄԻ ՌԵՍՏՈՒՑԻՉ, ցանկանում է ՌՈՒՍԱՑ ԼԵՋՈՒԻ ՌԵՍՏՈՒՑԻՉ պաշտոն ունենալ հայոց դպրոցներում: Գրիվն «Մշակի» խմբագրութեանը պայմանները իմանալու համար: 2—3

ՄԻ ՎԱՐՃՈՒՅԻ, որ աւարտել է Թիֆլիսի Գայեանեան դպրոցը, ՅԱԿԱՆՈՒՄ Է ՀԱՅՈՑ ԼԵՋՈՒԻ ՄԱՍՆԱՒՈՐ ԳԱՍԵՐ ՌԵՆՏԱՎ: ՀԱՄԱԶԱՑ Է ՆՈՅՆՊԷՍ ՄՆԱԿ ԸՆԿՆԱԿԻՆԵՐՈՒՄ ԵՒ ՊԱՐԱՊԵՆ ԵՐԵՎԱՆԵՐԻ ՀԵՑ: Հասցէն իմանալ «Մշակի» խմբագրատանը: 4—5

ՄԻ ԵՐԻՏԱՍԱՐԻ, որ աւարտել է Ներսիսեան դպրանոցը, ՅԱԿԱՆՈՒՄ Է ՌԵՍՏՈՒՑԻՉ ՊԱՇՏՈՆ ՌԵՆՏԱԿ Հայոց դպրոցներում: Հասցէն հարցնել «Մշակի» խմբագրատանը: 3—3

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Ի Ն Ե Ր
ՅՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱԽԳՆԱՑՈՒԹԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
Ն. ՊԱԿԵ ԵՒ ԸՆԿ.
(N. PAQUET ET COM.)

Կանոնաւոր և ուղղակի երթևեկութիւն ՄԱՐՍԵԼԻ և ԲԱՌՈՒՄԻ մէջ և փոխադարձ. Չորեքշաբթի, հոկտեմբերի 29-ին, ԱՐՄԵՆԻԱ (ARMENIE) շոգինաւը, նաւապետ ՇԷԼՏ (SCHEULT) դուրս կը գնայ Բաթումից դէպի Տրապիզոն, Օրդու, Սամսուն, Կ. Պոլիս և Մարսէլը: Տեղեկութիւնների մասին պէտք է դիմել ընկերութեան գործակալներին. Բաթումում պ. Գարանիսին և Թիֆլիսում պ. Բէնօլին, նախկին Արձրուկի գալլերում, № 103.